

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան . . . 12 Ժր.

Վեցամսեայ . . . 6 «

ԱՐՏԱՍՍԱԶՄԱՆ

Երկու քիւ միկ ծարսով

Տարեկան . . . 14 Ժր.

Վեցամսեայ . . . 7 Ժր.

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60

Վեցամսեայ 1. 50 Ժր.

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոցման տողը
20 սանթիմ

Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԱՐԵՆ ԶԱՐԲՇԵՐԻ ԵՆ ՇԱԲԱԹ

Կրթութիւնը եւ լին
տրուիր

Ռ Ո Ւ Ս Ի Ա
ՍԱՀՄԱՆԱԴԱՐԿԱՆ

Այս, ներկայ վայրկեանս Ռուս մեծածառալ կայսրութիւնը պատմական նոր դարաշրջանի մը սեմին վրայ կը գտնուի։ Չարերու միահեծան ինքնակալութիւնը՝ որ դարերու ընթացքին մէջ և մինչեւ այժմ ժողովուրդին ձայնը ու բաղձանքը արհամարելով քմահաճօրէն և անպատասխանատու կը վրձնէր, կառնէր ու կը ծախէր հարկեր միլիոն հազարակներու բաղդը, կեանքը և ինչքը, այսօր սահմաններու ու պայմաններու տակ դրուելու, կամ ժողովուրդին կամքին ենթարկուելու շրջանի մը մէջ կը մտնէ։ Այն ժայռայեղ բռնութիւնները, պաշտօնական յաւերժատակութիւնները, անիրաւ աքսորութիւնները ու սեղանները՝ որ վերջին տարիներու մէջ Ռուսիոյ մէկ ծայրէն մինչև միւսը ի գործ կը դրուէին և օրքան զոր կը խտանային ու կը բազմապատկուէին, եկան միացան դժբաղդ պատերազմի մը արհաւիրքներուն ու անփոխարինելի սպառնալիքներուն, և դժգոհութիւնը ու բողոքը ընդհանուր ըրին։ Երբ Նիքոլա Բ. Չարի յետադիմական շրջանի և ծածուկ ժողովրդական սպառնալիքներէ սկսած ինքզինք ստիպուած դառաւ այսօրեւ սանձը թուլցնելու մամուլին, որ սկսած է այլևս քիչ մը ազատ խօսիլ և գանգատիլ ու բաղձանք յայտնել հիմնական բարեփոխումներ մտցնելու վարչական արդի դրութեան մէջ։ Կառավարութիւնը պարտաւորուեցաւ դաւառային ժողովներու ներկայացուցիչները աղատ ձգել որ երթան համաժողով կազմել Բեռլինի մէջ։ Այդ ներկայացուցիչները՝ որ թէ գաւառները կը ներկայացնեն և թէ ազնուականութիւնը, այս

սինքն ունենոր դասին մեծագոյն շահերը, ճանչցան Ռուսիայ ներկայ քաղաքական դրութիւնը շարունակելու անկարելիութիւնը, և գրեթէ միաձայնութեամբ քուէարկեցին, ծանրաբոյն ձախդրութիւններէ խուսափելու համար՝ ստիպողական պէտքը երկրին մէջ ներմուծելու իրաւունքի և օրէնքի դրութիւնը մը, այսինքն սահմանադրական կրթութիւնը, Չարերու բացարձակ միապետութեան տեղ։

Բեռլինի մէջ ցրուեցաւ ձեռագիր սահմանադրական ծրարագիր մը, որ սկզբամբ ընդունուած պիտի ըլլայ գաւառական ներկայացուցիչներու համաժողովին և որուն պարունակութեան հետեւեալ ամփոփումը ցոյց կուտայ թէ Ռուսիան մօտ օրերու մէջ սահմանադրական կայսրութեան պիտի վերածուի։

Այդ ծրագիրը կը կրէ սա աւանդը, « Ռուս կայսրութեան հիմնական օրէնքները »

Կայսրը և Պետական Խորհուրդը, ազատութիւն խղճի և գոմարումի, անձի անընտանրկութիւնը, Գահին ժառանգութեան եղանակը նոյնը կը մնայ, Կայսրը երգում կընէ Խորհրդարանին և Պետական Մարմիններուն առջեւ։ Խորհրդարանը կրնայ կայսրը դործէ հետաքննել հիւանդութեան պարագային, Խորհրդարանը կը քուէարկէ հարկ եղած դրամը պալատին համար, Կայսեր անձը անընտանրկ է, նախարարները կայսեր գործերուն պատասխանատու են և Կայսեր իրաւունքներն են պատկառելի յայտարարել, խաղաղութիւն և դաշնադրեր կնքել օտար պետութեանց հետ, հրովարտական հանել որոնք օրինաց հակառակ չը տրամադրեն, Խորհրդարանը լուծել և նոր ընտրութիւն արտօնել, Կայսրը միեւնոյն ատեն բանակին և նաւատորմին հրամանատարն է։

Խորհրդարանը երկու ժողովներէ կը բաղկանայ, որոնք երեք տարուան համար կընտրուին։

1.—Ձեռնախա, և 2 ժողովուրդին ներկայացուցիչներունը։ Ձեռնախան կը բաղկանայ նահանգային և քաղաքային ժողովներու ներկայացուցիչներէն։ Ժողովուրդի ներկայացուցիչներու ժողովը ընդհանուրն հաւասար և գաղտնի քուէարկու-

թեամբ ընտրուածներէ կը կազմուի։ Ընտրուելու և ընտրելու իրաւունք կը վայելին հպատակ ըլլող շահաւատաւորիկ (բացի զինուորականներէ և ոստիկաններէ) քաղաքական ոճիրները և յանցանքները արգելք մը չեն։ Խորհրդարանի անդամները թոշակ կը ստանան։ Անոնցմէ որոնք որ պետական պաշտօնի կը կոչուին կը կորսնցնեն իրենց այդ անդամակցելու իրաւունքը, նախարարները զայն կը պահեն, Խորհրդարանի նիստերը զընթաց կըլլան։ Որոշումները ձայներու պարզ մեծամասնութեամբ կը արուեն, ի բաց առեալ հիմնական օրէնքներու մասին։ Օրինագիծեր կըրնան ներկայացուիլ իւրաքանչիւր անգամէ, բայց կընդունուին երկու ժողովներէն և կայսեր վաւերացման կենթարկուին։ Գործադիր իշխանութիւնը կը պատկանի Գահին որ նախարարներէ կը բաղկանայ, նախարարաց պատասխանատուութիւնը։ Նահանգներու և քաղաքներու տեղական ինքնավարութիւն։ Ընտրութեան ընթացքը կը լայնորէ մէջ ընդհանուր քուէարկութիւնը հաւասար և անձամբ կը կատարուի, Գաւառական և վարչական իշխանութիւններու անջատում։ Երկրը կը բաժնուի ընտրական շրջանակներու բնակչաց թիւին համեմատ։ Ընտրութիւնները տեղի կունենան կիրակի օրը, կայսերական հրովարտակի մը վրայ։

Էռոթեկնի թղթակիցը այս տեղեկութիւնը տալով կաւելցունէ, « Չափազանցած չպիտի ըլլամ եթէ ըսեմ թէ կառավարութիւնը շատ շուարած է նահանգային ներկայացուցիչներու համագումարին որոշումին վրայ, աւելի այն պատճառով որ անոնց մէջ զուտ յեղափոխականներ չեն տեսնուիր։ Բայց կտու ազատականներ, ինչպէս Լըվոֆ և Տոկուրուքով, Շիքով, Մոսկուայէ, Բէթրուքովիչ իշխաններն, պահպանողական կուսակցութիւնը և այլն։

«Ազատականներու շարժումը սահմանադրութեան այս պահանջին հասնելով, աշակցութիւն դառաւ յեղափոխական կուսակցութիւններէ և յառաջագոյն տարրերէ։ Գրգռումը մեծ է գործաւորներու և ուսանողներու մէջ »։ Ասոնք ալ իրենց կողմէ վճռական որոշումներ տուած և յայտարարութիւններ հրատարակած են, որոնցմով Սահ-

մանադրական երեսփոխան ժողովոյ դուրսարումը և դժբաղդ պատերազմին անմիջական դադարումը կը պահանջեն, ու միեւնոյն ատեն ընկերվարական կարգերը կուսոյ կը հրաւիրեն ինքնակալ կառավարութեան դէմ։

Վերջապէս ծանրակշիւ վայրկեաններու մէջ կը գտնուի Ռուս կառավարութիւնը։ Իսկ մենք մեծ և վճռական դէպքերու հանդիսատես ըլլալու նախքան դօրին մէջ կը գտնուինք։

ԿՈՎԿԱՍԻ ՌՈՒՊԱՅՈՒՄԸ

Հայոց շարժումին դէմ ի գործ դրուած սովորական ճնշումին սխաթման համընթաց կը շարունակուի անդադար բռնի Ռուսացումի քաղաքականութիւնը։ Անդրկովկասի մէջ։

Օրթոթոքութիւն և գաղթականութիւն։ ասոնք են գլխաւոր միջոցները այդ Ռուսացումին։ Հողի ահագին տարածութիւններ կը յառկացուին ներքին նահանգներէն գաղթող առանձնիւն, միջոցաւ հայ ազգայնականութիւնը ստատիկ կը նեղուի հողի պակասութենէն։

Հայերու հող կը տրուի պայմանաւ որ օրթոթոքութիւն ընդունին, կրօնափոխ ըլլան։

Հողի պակասութիւնը այն ստիճան զգալի է, մասնաւոր երեւանի նահանգին մէջ, որ խեղճ գիւղացիները ստիպուած կրօնափոխութեան կը գիմեն անօթի չմեռնելու համար։ Այս կերպով կը բացատրուի Ռուսիոյ գաւառին մէջ (Երեւանի նահանգ), սա վերջին տասը տարուան միջոցին, Օրթոթոքաւ հայ գիւղերու (ինչպէս Գուլբ, Խալֆայի, և այլն) երեւան գաւառ։

Նոյն իսկ կառավարիչները և գաւառականներու պետերը գաւառապետ ընկելու մեծ գործունէութիւն ցոյց կուտան և ասոր համար մեծ պաշտպանութիւն և ներթական օգնութիւն կը ստանան « Օրթոթոքութեան Բրօքականութիւններէն »։

Եղիարէթի փոխ կառավարչին Անարէշի և Սիւրմէի գաւառապետ Պօկոյաժովի հայ ահաբեկիչներու կողմէ սպանումէն յետոյ,

առաւ կառավարութիւնը որոշեց ճնշման անգութ միջոցներ ձեռք առնել այդ գաւառի բնակիչներուն դէմ :

Իկտեբրի մէջ՝ ուր որ Պօլսալուքին սպաննուեցաւ, խարաղանք գործ կը տեսնէ եւ Եղիսարէթաբոլի դաւառին մէջ գրեթէ ամէն օր խուսաբուած Ռուս գաղթականներ կը բերեն, որոնք Հայերէն խուսած հողերուն վրայ կը տեղաւորուին : Այնպէս որ, այս վերջին 4-5 տարիներու միջոցին, այսպեսով միայն Եղիսարէթաբոլի գաւառին մէջ ստեղծեցին երեք «Օրթոտոք» գիւղեր, եւ հիմա չորրորդ մըն ալ ստեղծելու վրայ են :

Ռուս գաղթականները դաժան վարմանմբ մը ցոյց կուտան զէպի տեղացի ժողովուրդը, զի զիտեն որ կառավարութիւնը իրենց կողմը կը բռնէ, անոնք վերջ ի վերջոյ սկսած են Հայերն ալ Ասիական նկատել իբր իրենց ստորակարգեալները, կըստիպեն զանոնք որ իրենց համար աշխատեն . . . :

Չ. . . գիւղին մէջ, օրինակի համար, Հայ դիւղացիներն այս վայրկենիս զբաղած են աւելի Ռուս գաղթականներուն գործերով (որոնց դոյքերն պէտք է փոխադրեն մէկ տեղէ միւսը) քան թէ իրենց մասնաւոր աշխատանքով : Ռուս գաղթականը կը հրաւայէ, եւ եթէ իրեն մտեկ չընեն, օտարականութեան եւ նոյն իսկ կառավարչին կը գանդատեն :

—Այն ատենէն իվեր, որ Անդրկովկասի հայ ժողովուրդը ոտք ելաւ զէն ի ձեռին, պոչտպանել իր ազգային իրաւունքները, կալիցին իշխանին քաղաքականութիւնը ակնհայտ կը ճգնի անոր դէմ դադաել մահմետական բազմաթիւ ժողովուրդին ատելութիւնը, եւ սակայն այս երկու տարիները խաղաղարար կարգէին կուշտ կուշտի երկար դարերէ իվեր :

Բոլոր այս ջանքերը ցարդ ապարդիւն մնացած էին : Ամենուրեք մահմետականները յայտնապէս մերժած էին կառավարութեան հետ համեմատելի ըլլալ հայ տարրը զսպելու համար :

Սակայն զիւանագիտութիւնը յամառաբար կը շարունակէ իր գաղտնի դիտումները, եւ վերջերս եղիսարեթաբոլի գաւառին մէջ, Թաթար աղաները եւ պէյերը կառավարչին պալատը հրաւիրուեցան ինչպէս կըսէի, Հայերուն դէմ ընդհանուր հաւածանք մը կազմաւորելու համար :

Այս ժամուս, զեռ չգիտցուի թաթար պէյերուն տուած պատասխանը, բայց զարմանալի չըպիտի ըլլար եթէ անոնց մէկ մասը, որ աւելի զերբամասէն է կաշառքի, հաւանէր ձարին բռնակալ կառավարութեան հետ խօսք մէկ ընել, իր խաղաղ դրացիներուն դէմ :

Օսլոյցո՞՞սիկ լրագրին հազարգումած

ՄԱԿԵԴՈՆԻՈՅ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Կ. Պօլսալուք. 17

Ռուսո-ճարտնական պատերազմը այսօր այնքան շահեկանութիւն ունի որ մտաւարագոյն Արեւելքի մէջ իբրաց

վիճակը հիմա երկրորդական տեղ մը կը բռնէ : Եւ սակայն՝ Մակեդոնիոյ գործերուն յառաջդիմութիւնը քաղաքագէտներու ուշադրութեան շատ արժանի է : Վերջին վեց ամիսներուն մէջ կացութեան վրայ զգալի փոփոխութիւն մը եղած է : Մինչդեռ տապանուանապէս եթէ ոչ իրականապէս խընդիր կար պաշտպանել քրիստոնեայ ընդհանրութիւնը թրքական բռնաբարութեանց դէմ. հիմա անհրաժեշտ դարձած է զանազան քրիստոնեայ տարբերուն միջեւ մտնել : Ամեն անգամ որ թուրքերը վրէժխնդրութեան համար կամ ապստամբութիւնը զսպելու պատրուակով սպանութիւններ ըրին, զիւզեր, եկեղեցիներ կամ դպրոցներ քանդեցին՝ այնպիսի ծանր տուգանքներ վճարելու ստիպուեցան՝ որ այսօր կեղծեալ՝ եթէ ոչ իրական՝ անտարբերութեամբ մը կը դիտեն օրէ օր բազմացող խռովութիւնները : Իրենց այս դիրքը իրենք շատ արդարացի կը գտնեն քանի որ այսօր Մակեդոնիոյ օստիկանութիւնը իրենց ձեռքէն խլուած է [. ° . °] :

Արդեւ, զանազադրէն բայց վրատահօրէն կերեւայ այն յաճախապէս ընդհարումներուն մէջ որոնք ոչ այնչափ յեղափոխականներուն եւ թուրքերու որքան քրիստոնեայ ազգութիւններուն մէջ տեղի կուենան : Սա ուշագրաւ իրողութիւն մըն է թէ այն բարբարոսութիւններ որոնք համար թուրքերը դաժնապէս կը մեղադրենք՝ քան իրենց հիմա որ հեղինակները քրիստոնեաներ են : Կը լսենք քահանաներու մասին որոնք իւրի մէջ կեռացուին, մօրուքներու եւ ոտքի եղունքներու մասին որոնք տրամաաբար կը խուլին եւ դեռ նմանօրինակ խռովութիւններն որոնք քրիստոնեաներու կողմէն քրիստոնեաներու վրայ կը գործադրուին. բան մը որ յանցաւորներուն համար անհերքելի ամօթ մը եւ թուրքերուն համար մեծ հաճոյք մըն է : Այս վերջինները իրենց ուսերը կը թօղվեն եւ Եւրոպային նախկին մեղադրանքներուն ակնարկելով՝ «Իսկ ինչո՞ւ աղէ՞կ մըն եւ յո՞վ մը կը պատասխանեն :

Այս պարագաները չեն կրնար զարմանք պատճառել ո եւ է մէկուն որ զէթ տարրական ծանօթութիւն մը ունի Մակեդոնիոյ խառնիճաղանճը կազմող զանազան ազգութիւններու մասին : Բայց հետեւանք շատ կնճռոտ հարց մը պիտի կազմէ զիւանագիտութեան համար՝ երբ նա Ժամանակ ունենայ՝ մինչեւ հիմա եղածէն աւելի լըրջութեամբ այս նիւթով զբաղելու : Որովհետեւ այս խնդրոյն նկատմամբ Եւրոպայի մընչեւ հիմա թափած ջանքերը ընթերցեն չեն կրնար աւելի : Այդպէս ընել ըսել պիտի ըլլար թէ բարեկարգութեան ծաղրերն համար պատասխանատու եղողները տիրող կացութեան եւ բարեկարգութիւնները գործադրելու մեթոտներուն մասին կատարելապէս տգէտ են, կարծիք մը որ ծրագրին հեղինակները վարկաբեկող բան մը պիտի ըլլար :— Մէկը որ պուլկարական ձգտումներու եւ թրքական վարչութեան մասին— թողունք յոյներուն եւ սերպերուն երկրորդական պահանջները—զէթ մակերեւութային ծանօթութիւն մը ունի՝ փետրվարի ծրագրէն կամ անոր հոկտեմբերի ընդլայնումէն չէր կրնար սպասել այժմանէն տարրեւ արդիւնք մը :

Եւ սակայն կարգ մը մարդոց խորհածը այս էր թէ այս բաներէն աւելին մէկը քայլ մըն էր զէպ ան-

խուսափելի ինքնօրինութիւն մը : Բայց հիմա կուսակցութիւնը ինքնօրինութեան կարելիութիւնը աւելի հեռացուցած ըլլալ կը թուի : Այլեւայլ Գրիստոնեայ ժողովուրդներուն իրարու հանդէպ ունեցած տեղութիւնը աւելի զօրաւոր է քան իրենց թուրքերուն հանդէպ ունեցած զգուշանքը : Եւ այնպէս կը թուի թէ երբ Սուլթանը ընդունեց բարեկարգութեանց անգործագրելի ծրագիր մը՝ որ ինքնին բաւական էր Մակեդոնիացիներու ազատութիւնը եւ փառաստենութիւնը աւելի գոգոնելու, անոնց խառնուածքը լաւ չափած էր, եւ գիտէր որ քրիստոնեաները մտադիր էին ապացուցանելու թէ իրաւունք հետ խաղաղ ապրելու ոչ կարիք ունէին եւ ոչ ալ կամեցողութիւն՝ մինչեւ իսկ եթէ թուրքերը զիրենք հանգիստ թողէին : Ճշմարտութիւնը սա է որ իւրաքանչիւր քրիստոնեայ տարրի փափաքն է անկախ ապրել : Անկախելի է Պետութիւններուն այն գաղափարը թէ անոնք բարեբուած թրքական դրութեան մը տակ ապրելով պիտի գոհանան :—Այս կէտիս վրայ՝ ամեն ալ համաձայն են եւ որոշած են ծրագրին գործադրումը անհնարին դարձնել : Պուլկարներ առանց կշտ նպատակն է Մակեդոնիան մակեդոնացի Պուլկարներուն ընել : Սակայն ոչ Սերպերը ոչ ալ Ունիերը բաղձանքը ունին թրքական իշխանութիւնը Պուլկարական մը հետ փոխանակելու : Եւ Պուլկարական շահի մը նշան երեցածին պէս անոնք պատրաստ են բռնի ընդդիմանալու :

Այսօր խորոյն լուծումը ոչ աւելի ժողովուրդ է եւ ոչ աւելի զերբացած քան տարի մը առաջ : Իրեղեւուն յարձակողները եւ անհատները սպանողները թրքեր ըլլան թէ պուլկարներ նոյն անիշխանութիւնը կը տիրէ : Հիմա շատ աւելի դժուարացած է խնդիրը, քանի որ երբ թրքերն էին յանձնաւոր պատասխանատու կառավարութիւն մը կար պարտաւելու, բայց երբ պուլկարական կամ յունական հըրոսախումբ մըն է յանցաւորը միակ պատասխանատու հեղինակութիւնը Եւրոպայի այնքան տաժանելի ջանքերով հաստատած օստիկանութիւնն է : Եւ իսկ կարելի չէ դուռը պարսաւել : Կարգ ու կանոն վերահաստատելու իրաւունքը անոր ձեռքէն առնուած է : Նոր եւ ըստ երեւոյթի ինչ անգործողներ տրուեցան իր ձեռքը որոնցմով կը բռնադատուի գործելու՝ հակառակ իր կամքին : Տեսականապէս Մակեդոնիոյ համար առաջարկուած բարեկարգութիւնները խելքի մօտ կերեւին, բայց գործնականներն մէջ անոնք միշտ ի դերու երեւելու դատապարտուած են. թուրքերոյ մէջ անոգուտ է հին տիկերուն մէջ նոր գիւնի չնի : Եւ Մակեդոնիոյ մէջ իմարութիւն է սպասել գոհացուցիչ արդիւնք մը քաղաքագիտական «էսկիզմութենէ» :

«ՍՈՒՆՏԱՐՏ»

Թ Ա Տ Ե Ր Ա Կ Ա Ն

«ԶԵՆԱՍԺՈՒՆ»

(Շար . Դախորդ թիւէն)

Շատ ընելիք չկայ չորրորդ արարքին մասին ուր յայտնութիւնները իրարու կը յագորդեն : Դերերը բաշտին կողմէն ալ լաւ արտայայտուեցան :

Էլէնը՝ որ հիմա միայն օրերով վիտալ է՝ զի, ինչպէս ինք կըսէ՝ շուարած է եւ անցած դարձածէն բան մը չը հասկընար : Կոմսուհին՝ կեղծ վիտալէն ազգաբարուելով՝ ներս կը մտնէ տոմսի ձեռին : Իրիւ մայր մը որմէ իր զաւակը կը լսեն՝ նա ձիւ մը արձակեց որ ամբողջ սրահը քստմեցուց :

Չորրորդ արարքը՝ երկուր է, որովհետեւ՝ ըստ սովորականին՝ նա կը պատրաստէ եւ կամփոփէ գործողութիւնը վախճանին համար : Կեղծ վիտալին տանը ներքնակողմը՝ կոմսին բնակարանին հետ բաղադատելով շատ խեղճուկ է : Ժանը հոն կը ծանծառնայ եւ զինք որդեգրող ծնողքէն լուր մը չտանելուն համար կը յուսահատի : Վերջին, ձեռնածուին սպասաւորը, կը կարծէ թէ կարող է զայն սփոփել ըսելով « մի լաք աղջիկ, կը հիւանդանաք, կը մեռնիք եւ վերջն ալ կը զոջաք . . . »

Բիչ վերջ կեղծ հայրը կը հասնի : Իւր աղջկան գգուանքները իրեն անհասկանալի են : Իրենին մէջ սրկառ մը դրած՝ կը նստի :

—Կը ծխես ուրեմ, հայրիկ :

—Այո՛, զաւակս : Բայց հանգիստ եղիք, ես վարժուած եմ . . .

Տարմանքի՝ Լիւսիէին մեկնումը իմաց տուած պահուն շատ նենգաւոր երեւոյթ մը ունի : Վայրկեան մը կը սկսի յուսալ, կը ծնարդէ . . . բայց Ժանի տկնածելի մէկ շարժումին վրայ՝ ոտքի կենէ եւ իր ոճը կը փոխէ : Սրբապատուրը ներս մտաւ՝ եւ կը կարծէ թէ Ժանի պիտի փութար յափըլտակել անոր ձեռքէն խորհրդաւոր տուած զոր ծառան ստիպուեցաւ երկար ժամանակ ձեռքը բռնած մնալ :

Երբ ներս մտաւ Լիւսիէի գոր վօլով պատրաստած էր՝ քաժնուած եւ իրար վերստին գտնող նշանածներուն պատկերը շատ գեղեցիկ եղաւ : Եւ սպասաւորին ուրախութիւնը այնքան զուարճացուց սրահը որ սրտապին ծափահարեցին :

Ժանն շատ պատկառելի եղաւ նաեւ երբ Տարմանքի վերադառնալով հարցուց իրեն թէ իր ծնողաց զրկելիք նստակը դրած է :

—Այո պարոն նամակագող, զրեցի եւ ահա պատասխանը . . . » Տարմանքիէ կ'անյայտանայ :

Ժանն խորհրդաւոր տուած բացած պահուն ալ հիմաւել էր : Մետաղիկը կարգաց անկեղծ ցաւի չեղծումը մինչդեռ Պօթօլէ՝ կեղծ վիտալը, հետըզհետէ աւելի զարմանալով եւ սոսկալի մղձաւանջէ մը արթնցածի պէս խապտ աղաղակ մը կը հանէ « բայց եո եմ Պօթօլէ . . . իր հայրը . . . » , Պ. Պապայեան իր նոր հօր գերին մէջ ինքզինքը գերազանցեց : Երբ հեծկըլտալով ծուկի կեղեւ ներողութիւն խնդրելու շարժումները իր եղունգներով կապառնայ իրեն՝ լաւ կը տեսնենք որ այլ եւս գինեմովի մը հետ դործ չուենք այլ հօր մը հետ որ իր պարտականութեանը գիտակից է եւ իր դուստրը կը պաշտպանէ : Բայց երբ Տարմանքիէ կըսէ թէ սենեակը մուկ է եւ Պօթօլէն մոմով մը գուրս կուգայ՝ մարդ չկրնար քրծծիծաղը զսպել : (աւա՛ղ թատերաբեմը չափազանց լուսաւորուած է. բայց ճար չկայ, այս կէտին վրայ այլեւս աւելորդ է անդրադառնալ) :

Հինգերորդ եւ վերջին արարքին մէջ երբ Ժանն զողջուն քայլով մը

իր հօր թիւին կոթնած ներս մտաւ
այնքան թառամած այնքան գունատած
էր որ ես ինքզինքս հարցուցի թէ
արդեօք աղջկին ալ իւր կուրծքին մէջ
մօրը ախտը կը կրէ :

Կոտուկին իր մուտքին մէջ շատ
աւելն գրաւ : Այս վայրկեանս՝ սրահը
յուզմունքէն համարացած էր : Մի քա-
նինները արցունք թափելու աստիճան
զգածուած էին : Պօթօլէ՝ զինեմովը՝
թշուառական ամուսինը՝ ձեռնածուն՝
կեղծ վիտալը՝ անմասն հայր մը կը
դառնայ :

Լիւսինն նուազ բնական էր երբ
եկաւ իր հօրեղբորը՝ Ֆիլոմին, ծանու-
ցանել ուստիկանապետին գալուստը :
Պայով այս վերջնոյն՝ ակնյայտի
բան է որ իրականապէս ուստիկանու-
թեան մէջ բնու գտնուած չէ : Կոտուկին
մէկ խօսքովը թող տուաւ կեղծ վի-
տալը զոր ձերբակալելու հրահանգ
ունէր եւ քաղուեցաւ գնաց . . . յուս-
ու մօտէջ խոնարհութեամբ մը : Շատ
երկիրներ կան ուր զէջ չէր ըլլար
այսպիսի հաճոյականատր ուստիկանա-
պետներ ունենալ :

Պօթօլէի խոստովանութիւնը վսեմ
եղաւ : Որոշած է ինքզինքը իր հայ-
րենիքէն տարագրել եւ իրրեւ միակ
սիւսիւսի իր զաւակին ձեռքին հաե-
լու թողնուածութիւն կը խնդրէ : Կոմ-
սուհեմ ըրած իր վերջին խնդրանքն
է իր քովը միացնել Լիւսիննը եւ
ժամանակ մինչդեռ ինք Տարմանդին կը
կշտամբէ յուսահատութեան սրտածըմ-
լիկ շնչով մը : «Տես չուսուական
եթէ ես այսպիսի աղջկան մը հայրը
ըլլալու արժանի չեղայ, դուն նուազ
արժանի ես անոր այրը ըլլալու :

Օ՛ն, դուքս էլ, մեկնինք, թողունք
այս երկիրը, մենք հոս ապրելու իրա-
ւունք չունինք . . .

«Մնաս բարեաւ աղջկիս, մնաք
բարեաւ անոր երջանիկ ծնողքը, մնաս
բարեաւ որդիս . . . մնաք բարեաւ :»

Լաւ ներկայացուած մը որ լաւ ալ
յաջողեցաւ : Դեռասանները իրենց
վերջին ճիգը թափելուն որովհետեւ ի

նպատակը զարգանքն էր, եւ հանդիսա-
տեաններն ալ չը զլացան իրենց ծափա-
հարութիւնները :

— Ձեռն գրեմք թէ պուլկարներն մե-
նախօսութիւնը որ արամային յաջոր-
դեց բոլորին ալ ճաշակին համաձայն
էր թէ ոչ : Հասկանալի է պ. Պապա-
նանի հոգը գոհացնել Հայերը եւ միաց-
եալներն ալ . . . Օգտակար եւ կորեւոր
է պուլկարական բաներու տեղ մը
վերապահել ներկայացումներուն մէջ :
Բայց աւելի լաւ կըլլար ուրիշ կտոր
մը տալ քան սիրային մենախօսութիւն
մը որ մայր ըլլալու վստիքով,
տոգորուող աղջկան մը կողմէ
կարասանութիւն : Ոչ ոքի համար
զաղանք մըն է թէ այս աշխարհիս
մատաղահաս աղջկաները ամուսնանալ
կերպքն : Ի՞նչ ուրեմն . . . Եւ սա-
կայն օրիորդ Միլքա Մէթնիքարովին
սահուն արտասանութիւնը դովիկ է :
Աւելորդ է ըսել թէ օր. Քաթինա իր
սովորական յաջողութեամբ պարեց,
եւ ինչպէս միշտ, այս անգամ ալ ծա-
փահարուեցաւ : Ահա արուեստագէտ
մը որ տաղանդ ունի եւ լաւ կընէր
որ երթար Եւրոպայի մէջ կատարելա-
գործուէր :

Լաւ էր նաեւ «Երեք սիրահարնե-
րը» սրտեք նուիրարական կրակը ի-
րենց սրտին մէջ ունեցող բոլոր
այրերու նման ախմար էին :

Պ. Յակոբեան աղջկ սիրահար մըն
է, բայց լաւ հրամանատար : Տիկին
Շաքարեան այս խաղին մէջ իր յա-
ջող կատակերգակ յատկութիւնը (1) ե-
րեւան հանեց եւ իր «մեծ տիկիննե-
րու պէս գետինը քուռող քղանքով
չըջաղեցաւ մը» ունենալու յարաբե-
րական փափաքը լաւ կը ցուցնէր թէ իր
երեք սիրահարները իրեն աչքին ահ-
շափ արժէք ունէին որքան իր սիրուն
զոգնոցին տանթէլը :

Թող որ զինուորական հագուստնե-
րն ալ արտառոց էին : Երբ Ֆրան-
սուա մասն ես կտրուեցի թէ Ֆրանսա
կը գտնուէին, բայց յանկարծ Պօրպա
կը մտնէ եւ մենք Սերպիա կը փոխա-
ղըրուինք.— իսկ տեղւոյ միութիւնը
ու՛ր կը մնայ . . .

Ո՛ր Պուլկա, Մօթէն, Գօրնէյ, Կի-
բոլոր դասական հեղինակներ, եթէ
զիտանայիք թէ որքան քիչ կարեւորու-
թիւն կուտան ձեզի վստիքային մէջ . . .

Ա. Ա. ԹՈՐԳՈՄ

ԱՁԳԱՅԻՆ

Սիմֆերօքի տեղեկութիւն մը
կը տրուի Մարէնի եւ թէ Հայոց
դպրոցներու ինքնավարութիւնը
վերստին արտօնուած է, եւ կը
սպասուի որ հայ եկեղեցիի գը-
րաւուած կալուածները վերա-
գարծուին :

Այս բերկրաւթ լուրը մենք
կանխահաս ըլլալ կը կարծենք :

— Տ. Մինաս Չէրազ իր թեր-
թի վերջին թիւին մէջ կը
գրէ թէ Ողբացեալ Խաչակ Ժաժ-
հարեան զոր Գաշնակցականնե-
րը յիմարաբար սպաննեցին,
տրամադրութիւն յայտնած էր՝
կարնոյ Սանտարեան Վարժա-
րանին նման՝ կիլիկիոյ մէջ բար-
ձր վարժարան մը հաստատել :

— Պերճիգական թերթ մը կը
գրէ թէ, Պերճիոյ Ակադեմիան
ծնագական հիւանդութեան մը մա-
սին լաւագոյն գործ մը արտա-
դրելու համար մրցում բացած
ըլլալով, 850 բժիշկներ մասնակ-
ցած են մրցման, եւ հայ բժիշկ
մը, Պօլսեցի սօք. Գ. Յակոբօֆ
շահած է առաջին մրցանակը,
1000 Ֆր. ի :

— Ատիս—Ապապա (Հապէշիտան)
հաստատուած հայ ոսկերիչ մը,
Պաղտատցի Տ. Պօղոս, այդ երկ-
րին մէջ գտած է ոսկիի հան-
քեր՝ զորս կը կարծէ թէ թը-
րանսընլալի հանքերէն աւելի
հարուստ են, Յոջողած է ինք Ե-

թովպիոյ կայսրէն արտօնութիւն
ստանալ այդ հանքերը շահագոր-
ծելու համար :

— Պօլսոյ թերթերուն գրածին
նայելով, Կիլիկիոյ Ս. Կաթողի-
կոսը երէկ Պօլսէն մեկնած պի-
տի ըլլալ Լոյսոյ «Եւքարա» շո-
գենաւով գէպի Մերսին, Հօնկէ
ուղղակի Սիւս պիտի երթայ
ն. Ս. Օծուլիւնը, ներկայ գո-
նուելու համար այն ճար-
տարապետական քննութեան
որ Սուլթանին հրամանով պէ-
տի կատարուի Մայրաքաղաքին
նորոգելի մասերը որոշելու եւ
ժախքը գնահատելու համար :
Պատրաստելի յատկաձեռ Պօլիս
պիտի զրկուի, որպէս զի անմի-
ջապէս սկսին նորոգութիւնները
որոնց ծախքը իրաւունք մը հա-
մաձայն կառավարութեան սըն-
տուկէն պիտի վճարուի :

Կաթողիկոսը իր մեկնումին
առթիւ կայս. Պալատ դացած է
երախտագիտական ուղերձ մը
մատուցանելու :

— Էտիսպուրկի համալսարանին
մէջ կը գտնուին երկու հայ ու-
սանողներ, մէկը Հնդկաստանցի
եւ միւսը Նոր-Չէլանտացի : Ա-
սոնցմէ զատ կան եղբր հայ ար-
հեստաւոր մը եւ աստուածաբան
միսիօնարցու մը :

— Մոսկուայի համալսարանին
լեզուաբանական ճիւղին մէջ յա-
ռաջիկայ տարի պիտի բացուի
հայերէն լեզուի ու բանասիրու-
թեան բեմմը : Լազարեան ճե-
մարանի նախկին տեսուչ բրօֆէ-
սէօր Գ. Խալաթեանց այդ պաշ-
տօնին պիտի հրաւիրուի եղբր :



ՆԵՐՍԵՍ ԱՅՏԱՐԱԿԵՑԻ

(Խրատագուած ԲՅՁՄԱՎԷՊ հանդէսէ)

Կաթողիկոսը կարգադրեց նոր Բայազետի կող-
մից էփան գնով եւ արժանահաւատ մարդկանց
ձեռքով գնել մասցու տաւար մը եւ ոչխար
եւ գնածները բերելին յանձնեցին գոմանոցի
վերակացուն, որ այնուհետեւ հորկաւոր դէպ-
քերում կշիռով յանձնուած էր սեղանատան տն-
տեսին միսն եւ ճարպը . իսկ կաշին կաշա-
պանին : Հաց թխելու համար ամեն օր հեռա-
ւոր տեղերից ուղտերով բերում էին իլղուն
կոճուած վառելիքը, կաթողիկոսը հրամայեց
վանքապատկան հինգ այգիների բարտի եւ այլ
ծառերի աւելորդ ճիւղերը կտրել, որով թէ
ծառերը կը զօրանային եւ թէ իլղունի ծախս
չէր լինի : Մի անգամ վանքի ծախսարարական
տոմարներ զննելիս կաթողիկոսը նկատեց, որ
մինչեւ 1000 ռուբլու ամբար կն գնել վանքի
խոհանոցի համար . վանքի տաւարն աւելցնե-
լուց յետոյ այդ վառելիքը խոհանոցի պէտքից
աւելի լինելով վաճառուած էր : առհասարակ
զարմանալի տնտեսադէտ մարդ էր Ներսէս կա-
թողիկոսն եւ շատ սիրում էր անարարութիւ-
նը : Մի օր նկատել էր, որ սառնարի մօտ

դրած է չափար, որ իրան եւ վեհարականնե-
րին թէյ պատրաստելու ջաթիւնները, ինձ կան-
չել տուեց եւ խոտութեամբ հարցրեց, թէ ին-
չու թողել եմ չափարը շաթիւնների մօտ, եւ
պատասխանեցի որ չայ պատրաստելու համար
է. եւ ասաց. «Դու ինքդ պէտք է կենաս
չափարի մօտ, դու չգիտես որ ճանճն ալ նո-
րա թշնամին է. դու սոթի ես տալիս որ
շաթիւնները դողութիւն սովորին» : Էլ միածնից
15—20 վերստ հեռու գտնուած Դէշլու գիւղը:
Մի չափաթ երեկոյ հիւրնկալ վարդապետը ներ-
կայացաւ կաթողիկոսին եւ յայտնեց, թէ Գե-
շլուի ոէն (տանուէր) Դադարն եւ մի քա-
նի համագրեղացի պատուաւոր անձինք եկել են
եւ մի ոչխար են բերել, ու ցանկանում
են Ձեր աջը համբուրել : Կաթողիկոսը պատը-
ւիրեց երեկոյան ժամերգութիւնից յետոյ նո-
րանց բերել : Թէյի ժամանակն էր, որ ե-
կան, աջը համբուրեցին եւ նստեցրեց թէյ խմե-
լու : զանազան հարցեր առաջարկեց գիւղական
տնտեսութեան վերաբերեալ . իսկ թէյը վեր-
ջացնելուց յետոյ ներողութիւն խնդրեց, որ
երեկոյան միասին ընթերցէ իւր իւր տեղի
որովհետեւ ինքը սովորութիւն չունէր ընթեր-
լու, միայն պատուիրեց, որ միւս օրը գան մի-
ասին ճաշելու : Իսկ ինձ պատուիրեց այդ ե-
րեկոյ նորանց վեհարանի սեղանին հրաւիրել եւ
վեհարականների հետ միասին ընթերց ահել տալ :

Միւս օրը կիրակի էր առաւօտեան ժամեր-
գութիւնն եւ սուրբ պատարագը կից էին կա-
տարում յառաջ : Կաթողիկոսն ըստ իւր սովո-
րութեան միշտ պատարագից յետոյ էր թէյ խը-
մում : Նա դեռ եկեղեցումն էր, որ եկան
Երեւանի նահանգապետ գնեբրալ Նսգարով եւ
Թիֆլիզից եկած Չիլիսեով աստիճանաւորն եւ իշ-
խան Մուխրանսկին, ու իջան վեհարանում :
Երբ յայտնեցի նորանց թէ կաթողիկոսն Կիւ-
ղեցումն է, իրանք էլ լուացուեցին, հագուստ-
ները փոխեցին եւ գնացին եկեղեցին : Եկե-
ղեցուց վերադարձան կաթողիկոսի հետ միա-
սին : Նորան թէյ եւ հիւրերուն սուրճ մա-
տուցուեց : Ես հաստատ գիտէի, որ կաթողի-
կոսը նորանց ճաշի պիտի պահէր, մեր խո-
հարարին պատուիրեցի մի քանի տեղակ կերա-
կուր պատրաստել նշանաւոր հիւրերի համար :
վեհարանը լաւ հմուտ դերմանացի խոհարար մը
ունէր : Կաթողիկոսը խօսում էր հիւրերի հետ
Միքայիլ եկաւ որ երէկ երեկոյան հրաւիրել է
Գէշլու գիւղից եկած մարդկանց այսօրւայ
համար ճաշի . անվայել համարեցի, որ հա-
սարակ գիւղացիները գնեբրալների հետ կա-
թողիկոսի սեղանակից լինին . ուստի մինչդեռ
վեհարանը շարունակում էր իւր խօսակցու-
թիւնը, ես մի թղթի վերայ գրեցի հետեւե-
ալը :

(Շարունակելի)

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐՔԻԱ

Սթանպոլտան աժանս «Բէյթեր» է նոյեմ. 12 թարիխէ պիտիտիտիկինէ պինաէն, Հաւէպտէն վերիւն մալիւմաթ իւզը, Ուրֆա տաքի ալման գոնսուրը վէ մէլքըր շէհրին եթթիմ-խանէ միւտիւրիւ Մ. Էսքարտ թիւրք ասքերէրինտէն շէտի-տէն տարպ օլընարագ՝ խասթա-խանէյէ նազլ օլընմըլ տըր :

—Պերլինտէն պիտիտիտիկի իւզը, Բուս հիւքիւմէթի Գարա-տէնիւղ տոնանմասընը Չանագգա-լէ պօղաղընտան կէշիւմէք իշիւն պէօյիւկ տէվլէթլէրէ մուէսսիւր միւրաճաւթլար իթմիշ, Աւստը-րիւ վէ Ալմանիա հիւսնի րիզա կէօսթէրմիշլէր, ֆագաթ ինկիւ-թէրա էլան գարշը կէլմէքտէ իմիշ :

—Սթանպոլտան «Յայթ» պիտի-տիտիտիկինէ պինաէն, Բուսիա-յա մուհիւմաթը հարպիէ կէօ-թիւրմէքաէ օլան պիր ֆըրան-սըլ վարօրը Չանագգալէ պօղա-ղընտա թիւրք մուհաֆըզլար թա-րաֆընտան զապթ իտիւմիշ, վէ սօնրա սիւհալարը ալուպ վարօ-րա եօլ վէրիւմիշ տիր :

—Եալընըզ զըրաթլէ մէշ-ղու օլանլար եէնի պիր իրատէ մուհէպինաէ թէմէտիւ վէրիւ-սինտէն մուաֆ թուլաճագ-լար :

—Մարքէթնիւնըն Գրուշէվա գասապարընտան խոլուսի մէք թուպլէրլէ պիտիտիտիկի իւզը, մահէլին Պուկար վէ Յընցար էհալիսինէ իանէ վառը իլէ Բուս միլլէթինէ տախիլ օլմալարընը Բուսլարտան թէքլիթ օլընմըլ ֆագաթ օնլար գապուլ իթմէմիշ օլմալլէ, շիմտի մահէլին Բուս քիլիսէ մէճլիսի (թաղ. խոր-հուրդ) Պուկարլարը վէ Յընցար-լարը չաղըրուպ « Էկէր Բուսլըլը գապուլ իթմէզ վէ Էվլաուընըլը Բուս մէքթէպինէ կէօնտէրմէզ-սէնիւղ շէթալար կէլուպ սիլի-քէսէճէքլէր, տէյուպ թէհտիտ իթմէքտէ իմիշլէր, իշպու սէ-պէպլէ Գրուշօվատա Պուկարլար վէ Գուցօվալար զօրգու իլէ-րիսինտէ պուլընըլարըմըլ :

Եու հալտէ թիւրք հիւքիւմէ թինէ սէվինմէք տիւշէյօր, վէ էլ ալթընտան տախի Բուսլարը թէշվիդ իթմէսի շիւքէսիւղ տիր :

—Սթանպոլ 16 նոյեմ. — Բա-ղար կիճէսի 100 քիշլիք պիր Բուս շէթասը Չէլէնիլէ նամ պուկար քէօյիւն իւզէրինէ հիւ-ճուլ իթտի բարասը գաթլ իթ-մէք մագսէտի իլէ ֆագաթ բա-բաս գալմըլ օլմալլէ, շէթա պիր տիւկիւն Էվլինէ հիւճուլ իտուպ, օրատա 13 քիշլի գաթլ իթտի, (պու մագթուլարտան պիրի գատրն վէ պիրի չօճուգ) վէ 5 քիշլի եարէլէտի : Պու հիւճուլ վուգուլ էսնասընտա իքի քիւ-

մէթրօ իրագ պուլընան Նէվէսքա նամ քէօյտէ պիր պէօլիւկ ասքէր պուլընմըլ վէ սիւհա սէսլէրի իշիտիւմիշ իքէն՝ ասքէրլէր աս-լա իմտատա գօշմալուպ՝ շէթա-նըն գալմալընա միւսատտէ վէր-տիլէր : Իշպու վուգուլարտան տօլայը Աթինայա մուէսսիւր միւ-րաճաւթլար օլընաճագ տըր : Գօնսուրլար թահգիգաթ իշիւն Չէլէնիլէյէ կիթտիլէր :

Բուս շէթալարըն պու հարէ-քէթլէրի պուկար գօմիթալարը տախի իլէ պաշլամայա մէճպու-ր իտէճէկինտէն տօլայը տիւլօմաթ տախիլէրինտէ էստիլէ հասըլ օլմագտա տըր :

—Ատէն, Եէմէն վէ Գուվէյթ էյալէթլէրին տախիլի գըրմըն-տան տօլայը ինկիլիզ տէվլէթի իլէ մուլտապէրաթ տէվալ իթ-մէքտէ օլուպ, ինկիլիզլէրի ճէպը իսթիմալընա մէճպուլ իթմէք-սիլիւն՝ եագընտա իթիւլաֆ հա-սըլ օլմաղը մէմուլ օլընըյօր :

Կիրիտ առասընը Եունանիս-տան իլէ պիրլէշտիւմէք մէսէ-լէտի շիմտիլիկ տիւլօմաթ մա-սասը իւզէրինտէն պէր թա-րաֆ իտիտիկի Լօնտրատան պիւ-տիտիլէյօր : Բրէնս Եօրիկ մէյու-սիլէթլէ եագընտա Կիրիտէ ալտէթ իտէճէք տիր :

Մ Ո Ւ Հ Ա Ր Ե Պ Է

—Լօնտօն 18 նոյեմ. — Թօքիօ տան իշար օլընտըլը իւզը, տէհ-շէթլի պիր միւտարէպէտէն սօն-րա ճարօնլըլար Բօրթ Արթուրըն տախիլի ճիհէթինէ հիւքմ իտէն թէքէնիւն ճէնուպի շարգ թարա-ֆընը գապթ իթմիշլէր : Ժէնէ-րալ Նօկիւնի թէլէկըրաֆընա պինաէն, ճարօնլըլար Բօրթ Ար-թուրա պէքլէնէն մուվաֆա-գիլլէթի էլտէ իթմիշլէր :

—Բուս մէնպալարընտան իշար օլընտըլընա պինաէն, Մուգտէն թարաֆընտա, ճարօնլըլար Յան-ցօն նամ նօթթատան կէրի շէ-քիւմիշլէր, վէ Բուսլար տիւշման-տան մուգալմէմէթ կէօրմէքսի-լին պիր ազ իլէրլէմիշլէր :

—Իւշատէտ ճարօն քըրաղէօ-րի վէ 15 թօրթիլէօյլէր Հինտ Ուկիւնտսընտա Բուս Պալթիկ տօնանմասընը գարշըլամագ ի-շիւն Սաշօ լիմանընտան ճէնուպա տօղրու հարէքթ իթտիքլէրի Թօքիօտան Լօնտրայա պիւտի-րիլմիշ տիր :

—Բէթէրպուրկ 18 նոյեմ. — Բուսիւնըն եարմագտատըրօլտըլը եէնի տօնանմա ապրիլտէ իքմալ օլընաճագ, վէ «Էվրօրէէնքա էսք-ատրա» թապիր օլընաճագ տըր :

Տ Ա Ի Ի Լ Ի Է

—Սօֆիատաքի եէնի օսմանլը քօմիտէրինի ֆէլաւ. Բրէնս ֆէր-

տինանտ հաղրէթլէրի էլան հու-զուրընա գապուլ իթմէմիշ օլմա-սընտան տօլայը, Եըլտըզ վէ Պապը Ալի մէհաֆէլինտէ խօշնուտիլէթ-սիլիլք հուսուլա կէլմիշ տիր :

—Սալը կիւնիւ Սօպրանիէ գա-բալը սուրէթտէ ագտը մէճլիս իթմիշ տիր : Սօֆիա կաղէթա-լարըն եագտըզլարը իւզը, պու մէճլիստէ հարպիէ նաղըրը ժէ-նէրալ Սալօվ լէվաղիմաթը աս-քէրիլէ իշիւն 42 միլիոն եէտի եիւզ պին ֆօր պիր գրէտի իս-թէմիշ տիր : Պու մէպաղըն 25 միլիոնը Էվլէլտէն եէնի թօր-լարա թախիս օլընմըլ Էմր. շու հալտէ եէնիտէն 17,700,000 ֆր. գրէտի իսթէնիլէյօր : Իշպու ագճէ իլէ պուկար տօնանմասը թանգիւ ու թէշքիլ օլընաճագ վէ թօրթիլէօյլէր վէ թօրթիլէր ալընաճագ Էմր :

Հարպիէ նաղըրընըն պու թա-լէպի Սօպրանիէտէ մուխալիֆ մէպուսլարըն Բօրթէթլէրի խի-լաֆիւնա օլարագ՝ գապուլ օլըն-մըլ տըր :

Պու 42 միլիոն 700,000 տան մատա կէշէն սէնէ տախի 25 միլիոն ֆր. գապուլ օլընմըլ օլ-մաղլէ, եէքիւնի 67,700, 000 ֆր. ճէսիւմ մէպաղա պալիլ օլըյօր քի՝ ասըլ ասքէրիլէ պիւտճէսին-տէն սըլալը պիր մէսաքիֆ տիր :

ՍՕՆ ԹԻԼԵԿԻՐԱՅԻՍԻՐ

Բեթերպուրկ 19 նոյեմ. Խէնտէքլէրտէ ճարօն ասքէր-լէրին մէքեանլարը Բահաթ ի-սէտէ, կէրի շէքիլմէքտէ տիր-լէր :

Թօքիօ 19 նոյեմ.

Մանշուրիատաքի ճարօն մէր-քէզի օրտուսընտան պիտիտի-տիլի իւզը, ուֆագ միւտարէպէ-լէր վուգու պուլուպ, Բուսլար էհէմմիլլէթիլ թէլէֆիաթլէ կէ-րի սիւրիւմիւշլէր տիր :

Բօրթ Արթուրտան իշար օլըն տըլընա պինաէն, Չուքրօ վէ Նախաբուրա նամ ժէնէրալար եարէլէնմիշլէր :

Բեթերպուրկ 18 նոյ .

Բօրթ Աթթուլը մուհաֆաղա իտինլէրէ վէ ալիլէլէրինէ 100000 րուպլի իանէ վէրիլմէսի պէ-լէտիլէ թահթը գարաբա ալ-տը : Բէզա պու մագսէտլէ պիւ-թիւն Բուսիատա իանէ տէֆ-թէրի քիւշատ օլընմասընը Բէ-թերպուրկ պէլէտիլէ հէյէ-թիւնտէն թէնալպ պուլուրըլ-սը :

Պերլին 19 նոյեմ .

Բեթերպուրկտան «Լօքալ Ան-ցալկի»-է պիտիտիտիկի իւզը տիւն Բօրթիտօնօսցէֆին նէզ-տինէ 45 պէօյիլի րահպլէր թօրլանալագ, Գանուըն Էսասի (Սահմանագրութիւն) վէրիլմէ-մէք իշիւն Չարա րէճա իտիլմէ-

սինէ գարար վէրմիշլէր :

Վաշինկթօն 19 նոյեմ. Իքիւնի սուհ գօնֆէրանսը Լա-Հէյտէ թէճէմմիւ իթմէք ի-շիւն Մ. Ամերիկա հիւքիւմէթի-նիւն թէքլիթը տիլէր տէվլէթ-լէտէն գապուլ օլընմըլ իքէն, Բուսիա տախի մէպաէն գապուլ իթտի իսէտէ, Բուս-ճարօն մու-հարէպէսինիւն խիթամընա գա-տար թէէլիլ օլընմասընը թէք-լիթ իտէյօր :

Լօնտօն 19 նոյեմ.

Չիֆուտան ալընան հալատի-սաթ իւզը, Էրվանկան գալէսի վէ 205 մէթրօ եիւքսէկ օլան թէլէլէնիւն զապթը էսնասընտա պիր գաշ տէֆա սիւնիկիւ գալկա-սը վագը օլմուշ : Ճարօնլարըն թէլէֆիաթլէ Էմր Զօք տըր : Բօրթ Արթուրը մուհապէրէ իտէն ճա-րօն օրտուսընըն Էօլէնիլէրին Վըզ-տարը Էվլէլլինտէն շիմտիլէ գա-տար 25,000 քիշլիէ պալիլ օլմուշ :

Սթանպոլ 19 նոյեմ .

Մարքէթնիւն Սիւֆէթիլիշի Հիւ-մի վաշանըն Սուլթանա սա-տագաթլէ իշֆաի լըրտէթ իթ-մէսինէ միւքեաֆաթլէն մու-րասա «Օսմանիլէ» նիշանը իհ-տա օլընտը :

Թահգիգաթ իշիւն Չէլէնի-շէ քէօյիւնէ կիթմիշ օլան իս-լահաթը տէվլէթլէրին իքի գօնսուրլարը Մանասըրա ալ-տէթ իթտիլէր : Թահգիգա-թլէն նէթիճէսի տիւն վէրմիշ օլտըլըմը մալիւմաթլը թատիղ-իտէյօր : գաթլ օլընանլար 13 օլմալուպ 11 քիշլի տիր, տի-կէր 4 քիշլի տախի եարէլէնմիշ լէր : Չէթանըն րահպէլլէրի Եունան ասքէրլէրին գապէթ-լէրինի թաշըր Էմրալ վէ պիր թագըմը ճիլլար քէօյլէրին Բուսլարընտան Էմր :

Կ Ը Փ Ն Տ Ի Ո Ւ Ի

Բնիկ Պօլսեցի 20 տարեկան չագա-նակագոյն մագերով Նշան Ալմանիկ-եան անուն լեկիտասարը՝ որ հինգ տարիի չափ Լօնտրա թուանաւանի օր-բանոցը միաճած եւ ասկէ 5-6 տմիս ասուլ Լօնտրաէ գէպի Գանատա մեկ-նելով իր թղթակցութիւնը զաղրե-ցուցած է, կը փնտռուի իր մօր կող-մէ : Ուստի այդ երիտասարդին հա-սէն գիտցալ ազգայիններէ կը խնդրուի որ երկտողով մը խմբագրութեանս հոճին իմացնել օրով օրեկորոյս մայր մը պիտի միլիթանն :

ՄԱՔՈՒՐ ԿՈՐԵԿԱԶՈՒՐ (Պ Օ Զ Ա)

20 երկար տարիներու փոռճա-րութիւնս համարձակութիւն կուտայ ինձ. ծանուցանել արդոյ յաճախորդնե-րուսթէ ինչպէս ուրիշ տարիներ նաեւ այս տարի կը պատրաստեմ մաքուր, թարմ եւ համեղ կորեկի ջուր, սննդ-գարար եւ ախորժիկ :

Ասալը-Համաթի կից թիւ 577 ՏՍՔՆՍԵԱՆ ԵՒ ՍՈՒՎԱՐԵԱՆ

Одговорникъ А. Курбетянцъ
печатица «Взаимность» — Варна